ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/40

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.02.2022թ. թիվ 26/26-1/1707-2022 գրությամբ «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Արմավիրի մարզի «Մերձավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 24.01.2022թ. թիվ 1 գրության հիման վրա, 01.02.2022թ. թիվ 26/26-1/1707-2022 գրությամբ նախաձեռնել է «Ղահրաման» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ղահրաման» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/40 ընթացակարգի շրջանակներում 09.02.2022թ. ժամը 09:42-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ Արմավիրի մարզի «Մերձավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Արմավիրի մարզի «Մերձավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.01.2022թ. թիվ 1 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ Արմավիրի մարզի «Մերձավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ն իր կարիքների համար 2022 թվականին սննդամթերքի ձեռքբերման ԱՄՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-22/1 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Ղահրաման» ՍՊԸ-ին, 58-րդ չափաբաժնի մասով, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2022 թվականի հունվարի 13-ին առաջարկվել է կնքել պայմանագիր: Սակայն 2022 թվականի հունվարի 17-ին «Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է էլեկտրոնային գրություն պայմանագիր կնքելու առաջարկից հրաժարվելու վերաբերյալ:

Վերոգրյալով պայմանավորված և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետի պահանջներով, այն է՝ որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց, առաջարկում եմ «Ղահրաման» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/40 ընթացակարգի շրջանակներում 09.02.2022թ. ժամը 09:42-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ՆԳ-2022/40 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/40 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Արմավիրի մարզի «Մերձավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է «ԱՄՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ղահրաման» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Ղահրաման» ՍՊԸ-ին 58-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

3. «Ղահրաման» ՍՊԸ-ն, ՀՀ Արմավիրի մարզի «Մերձավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հաշվի առնելով ԱՄՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-22/1-2 պայմանագիր կնքելու առաջարկը «Ղահրաման» ՍՊ ընկերությունը որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց»:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.01.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից 17.01.2022թ. ներկայացվել է էլեկտրոնային գրություն, որով վերջինս հրաժարվել է պայմանագիր կնքելուց և որոշում կայացրել «Ղահրաման» ՍՊԸ-ին ներկայացված պայմանագիր կնքելու առաջարկը չեղարկելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.02.2022թ. թիվ 26/26-1/1707-2022 գրությունը, ՀՀ Արմավիրի մարզի «Մերձավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 24.01.2022թ. թիվ 1 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց</u>,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ Արմավիրի մարզի «Մերձավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է «ԱՄՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ղահրաման» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Ղահրաման» ՍՊԸ-ին 58-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

«Ղահրաման» ՍՊԸ-ն, ՀՀ Արմավիրի մարզի «Մերձավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

<u>«Հաշվի առնելով ԱՄՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-22/1-2 պայմանագիր կնքելու առաջարկը «Ղահրաման» ՍՊ ընկերությունը որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց»:</u>

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.01.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ ***<u>Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն</u>***

<u>արձանագրել է, որ «Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից 17.01.2022թ. ներկայացվել է էլեկտրոնային գրություն, որով վերջինս հրաժարվել է պայմանագիր կնքելուց և որոշում կայացրել «Ղահրաման» ՍՊԸ-ին ներկայացված պայմանագիր կնքելու առաջարկը չեղարկելու վերաբերյալ:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուսումնասիրելով ՀՀ Արմավիրի մարզի «Մերձավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Ղահրաման» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո Պատվիրատուին ուղղված գրությամբ հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.02.2022թ. թիվ 26/26-1/1707-2022 գրությամբ «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների

հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**